




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ

«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱԶԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«11» հուլիս 2016թ.

Հաստատում եմ՝

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

պետ  Մ. Անանյան

ՍՑ-ԳԲԽ-40/16 բողոքը քննող

հանձնաժողովին

Ե Ջ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40476-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրություններով ներկայացված «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ դատական դեպարտամենտի 16.11.2015թ. թիվ Ե-6355 գրության հիման վրա, 16.12.2015թ. թիվ 1/73-1/40476-15 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող

մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու համար:

Կենտրոնը 04.02.2016թ. թիվ 01/04.1/298-16 գրությամբ, ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40476-15 գրության հիման վրա, «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ում կատարված ուսումնասիրության արդյունքում կազմել է եզրակացություն, որով Կենտրոնը արձանագրել է «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը:

Միաժամանակ Կենտրոնը հայտնել է, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի հայտ, քանի որ Օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտել է, որ խախտումը թույլ տալու պահից (01.10.2015թ.) հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից հայտ ներկայացնելը հիմք կհանդիսանա ՀՀ գնումների բողոքարկման խորհրդում պաշտոնական ընթացակարգ նախաձեռնելու համար, որի արդյունքում «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ն կարող է ներառվել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Միաժամանակ նույն գրությամբ Կենտրոնը խնդրել է ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ

մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

2. «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը կարծիք ստանալու նպատակով 17.12.2015թ. թիվ 01/04.1/3773-15 գրությամբ դիմել է «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին, սակայն ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ գրությանը՝ Ընկերության կողմից գրավոր կարծիք չի ներկայացվել:

Ընկերությունը 02.03.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ նոր ի հայտ եկած հանգամանքներից ելնելով՝ Ընկերության կողմից իրականացվել է մանրամասն ուսումնասիրություններ, որի արդյունքում 2014թ. հաշվետվության մեջ հայտնաբերվել են անճշտություններ, որոնք վերացնելու նպատակով Ընկերության կողմից կատարվել է 2014թ. տարեկան ռեզիդենտի շահութահարկի հաշվարկի ճշտում, որի հիման վրա Ընկերության ակտիվները կազմել են 119.017.833 ՀՀ դրամ, իսկ պարտավորությունները՝ 119.010.884 ՀՀ դրամ:

Հետևաբար, ըստ Ընկերության, ակտիվները գերազանցում են պարտավորություններին:

Ընկերությունը, հիմք ընդունելով վերոհիշյալ հանգամանքը, գրությամբ խնդրել է չընդգրկել «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին Ցուցակում և կից ներկայացրել է 2014թ. ռեզիդենտների շահութահարկի գծով հաշվետվության ճշգրտված տարբերակը:

«Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի ներկայացուցիչը, մասնակցելով 11.05.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-40/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստին, հայտնել է, որ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

3. ՀՀ դատական դեպարտամենտի ներկայացրած փաստաթղթերը և դիրքորոշումը

ՀՀ դատական դեպարտամենտը (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 16.11.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-6355 գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությանն է ներկայացրել Պատվիրատուի կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊԶԲ-15/12-05» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգի շրջանակներում «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի վերաբերյալ ի հայտ եկած տեղեկատվությունը և ընթացակարգին վերաբերող անհրաժեշտ փաստաթղթերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով 11.05.2016թ. ժամը 16:00-ին Կենտրոնում կայացած ՍՑ-ԳԲԽ-40/16 բողոքը քննող հանձնաժողովի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԳԲԽ-40/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40476-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրություններով ներկայացված «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ դատական դեպարտամենտի կողմից ՀՀ դատական դեպարտամենտի կարիքների համար էլեկտրատեխնիկայի, ռադիոտեխնիկայի և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊԶԲ-15/12-05» ծածկագրով շրջանակային համաձայնագրերի միջոցով գնում կատարելու ընթացակարգին (այսուհետ նաև՝ Ընթացակարգ) մասնակցելու նպատակով «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ն 01.10.2015թ. հայտ է ներկայացրել:

2. «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացված հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» կետով, հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն

նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:

3. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 06.10.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 5 արձանագրության 2-րդ կետով որոշել է Ընթացակարգի 2-րդ չափաբաժնի մասով «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին ճանաչել 1-ին տեղ զբաղեցրած մասնակից:

4. Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 07.10.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի վերաբերյալ:

5. Ի պատասխան վերը նշված հարցմանը՝ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից Պատվիրատուին 08.10.2015թ. տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար՝ **118.898.874** և **118.457.784** ՀՀ դրամ:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 14.10.2015թ. ժամը 10:00-ին կայացած նիստի թիվ 6 արձանագրության 2-րդ կետով որոշել է «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի հայտը մերժել:

7. Կենտրոնը 04.02.2016թ. թիվ 01/04.1/298-16 գրությամբ, արձանագրել է «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի կողմից «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտման առկայությունը և խնդրել ՀՀ ֆինանսների նախարարությանը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված խախտում թույլ տված մասնակցի անվանումը հրապարակել www.gnumner.am համացանցային կայքում, ինչպես նաև համապատասխան շրջաբերականով պատվիրատուների կողմից հայտարարված մրցակցային գնման ընթացակարգերին Կենտրոնի եզրակացությունով արձանագրված խախտումը թույլ տված մասնակցի կողմից մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու դեպքում այդ մասին Կենտրոնին անհապաղ տրամադրել գրավոր տեղեկություններ (ընթացակարգի ծածկագիրը, մասնակցի հայտի պատճենը և այլն):

8. ՀՀ ֆինանսների նախարարությունը 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ անհրաժեշտ է նախաձեռնել «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

9. Ընկերությունը 02.03.2016թ. գրությամբ Կենտրոնին հայտնել է, որ Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային կազմում են համապատասխանաբար՝ 119.017.833 և 119.010.884 ՀՀ դրամ:

10. Կենտրոնը 23.03.2016թ. թիվ 01/04.1/1131-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե որքան են կազմում «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն (01.10.2015թ) նախորդող տարվա՝ 2014թ. ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները:

11. Ի պատասխան Կենտրոնի վերոհիշյալ հարցմանը՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն 07.04.2016թ. թիվ 1/6-1/11343-16 գրությամբ հայտնել է, որ «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող տարվա՝ 2014թ. ընթացքում ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքը կազմում են 119.017.833 ՀՀ դրամ, պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքը՝ 119.010.884 ՀՀ դրամ:

5. ՍՑ-ԳԲԽ-40/16 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

«Գնումների աջակցման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ուսումնասիրելով ՀՀ դատական դեպարտամենտի 16.11.2016թ. թիվ ԴԴ-3-Ե-6355 գրությունը և կից փաստաթղթերը, «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի 02.03.2016թ. գրությունը, ՀՀ ԿԱ պետական կոմիտեի 07.04.2016թ. թիվ 1/6-1/11343-16 գրությունը, հայտնում է հետևյալը.

Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետի համաձայն՝ մասնակիցը պետք է բավարարի հրավերով սահմանված որակավորման չափանիշներին: Մասնակիցը պետք

է ունենա պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարման համար հրավերով պահանջվող ֆինանսական միջոցներ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) Կարգի 67-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցների՝ Օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված՝ «Ֆինանսական միջոցներ» չափանիշը գնահատվում է հետևյալ կարգով՝

1) հրավերով պահանջվում է, որ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակիցն իր հայտով ներկայացնում է հայտարարություն այն մասին, որ իր կողմից **հայտը ներկայացվելուն նախորդող՝**

բ. հաշվեքու պարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը.

Կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային եղանակով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն հարցում է ներկայացնում առաջին և հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակիցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի նկատմամբ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորությունների, ինչպես նաև նույն կարգի 67-րդ կետով նախատեսված որակավորման պահանջի առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունը նույն կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին եզրակացություն: Նույն

կետով սահմանված ժամկետում Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարությունից եզրակացության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը համարվում է իրականությանը համապատասխանող: Եթե տրամադրված եզրակացության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները որակվում են իրականությանը չհամապատասխանող, ապա՝

1) հայտերի գնահատման արդյունքների հրապարակման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է, և

2) այդ մասնակցի տվյալները գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու գործընթաց նախաձեռնելու նպատակով ի հայտ եկած հանգամանքների մասին տեղեկությունները պատվիրատուի կողմից ուղարկվում են Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն՝ դրանց ի հայտ գալու օրվան հաջորդող երեք աշխատանքային օրվա ընթացքում:

«Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ն Ընթացակարգին մասնակցելու նպատակով ներկայացրած հայտի N 3.4 հավելվածով՝ ֆինանսական միջոցների մասին հայտարարության «բ» ենթակետով, ***հայտնել և հավաստել է, որ հայտը ներկայացնելուն նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը:***

Պատվիրատուն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված տվյալների ճշտման մասին 07.10.2015թ. կատարված հարցմամբ, խնդրել է տրամադրել տեղեկատվություն «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի վերաբերյալ, որին ի պատասխան տրամադրվել է եզրակացություն, համաձայն որի՝ «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելու նախորդող հաշվետու տարվա ընթացքում պարտավորությունների և ակտիվների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմել են համապատասխանաբար՝ **118.898.874** և **118.457.784** ՀՀ դրամ:

Միևնույն ժամանակ, Կենտրոնը, հիմք ընդունելով Ընկերության 02.03.2016թ. գրությամբ հայտնած դիրքորոշումը, 23.03.2016թ. թիվ 01/04.1/1131-16 գրությամբ դիմել է ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեին՝ խնդրելով հայտնել, թե որքան են կազմում «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն (01.10.2015թ) նախորդող տարվա՝ 2014թ. ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները, որին ի պատասխան՝ ՀՀ ԿԱ պետական եկամուտների

կոմիտեն 07.04.2016թ. թիվ 1/6-1/11343-16 գրությամբ հայտնել է, որ «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ի հայտը ներկայացնելուն նախորդող տարվա՝ 2014թ. ընթացքում ակտիվների և պարտավորությունների հաշվապահական հաշվեկշռային արժեքները կազմում են համապատասխանաբար՝ **119.017.833** և **119.010.884** ՀՀ դրամ:

Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում գնման գործընթացի շրջանակում ներկայացրել է կեղծ տվյալ:

Այսպիսով, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ համաձայն ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 07.04.2016թ. թիվ 1/6-1/11343-16 գրության, **Ընկերության հայտը ներկայացնելուն նախորդող հաշվեկշռի տարվա ընթացքում պարտավորությունների հաշվեկշռային արժեքը չի գերազանցել ակտիվների հաշվեկշռային արժեքը**, գտնում ենք, որ ՀՀ ֆինանսների նախարարության 16.12.2015թ. թիվ 1/73-1/40476-15 և 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրություններով ներկայացված «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Հետևաբար Կենտրոնը առաջարկում է ՀՀ ֆինանսների նախարարության 15.02.2016թ. թիվ 1/73-1/5285-16 գրությամբ նախաձեռնված «Կլիմա Կոնտրոլ» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02584502) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգը մերժել՝ Ընկերությանը Ցուցակում ներառելու հիմքերի բացակայության հիմքով:


«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի՝

Պետի տեղակալ՝



Հ. Այունց

Գնումների բողոքարկման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝



Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի պետ՝



Մ. Կատվալյան

Գնումների բողոքարկման և
ահազանգման բաժնի առաջատար
մասնագետ՝ ՍՅ-ԳԲԽ-40/16 բողոքը
քննող հանձնաժողովի քարտուղար՝



Ա. Ծատուրյան